ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՆՈՐԻԿԻ

ՄՈՐ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կամո Երեմի Վարդանյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**
	հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սյուզի Ֆելիքսի Սարգսյան**
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 12^{00}-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. օգոստոսի 29-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կ.Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ընտանիքն ամուր պետության հիմքն է, որտեղ առաջնային է կնոջ՝ մոր դերը:

Հաճախ ապագայի նկատմամբ անվստահությունը, սոցիալական լարվածությունն ու ներքին տագնապայնությունը նպաստում են մոր ագրեսիվ վարքի առաջացմանը, որի զարգացումը կարող է հանգեցնել բռնության ամենատարբեր դրսևորումների, անգամ՝ մանկասպանության:

Ի տարբերություն այլ երկրների՝ Հայաստանում բացակայում են դրանց վերաբերող պաշտոնական վիճակագրություններն ու վերլուծությունները:

Մայրերի մոտ ագրեսիվ վարքի առաջացումը դաստիարակության գործընթացի բացասական դրսևորում է, որին հաջորդում է ապակառուցողական դիրքորոշման առաջացում, որն էլ երբեմն ուղղորդվում է դեպի սեփական երեխան:

Մայրերի ագրեսիվ վարքը պայմանավորված չէ նյութական դժվարություններով կամ կենցաղային տարաբնույթ խնդիրներով: Այլ կերպ ասած՝ այն սոցիալական անապահովության հոմանիշը չէ և առավելապես կնոջ անձնային որակների համալիր ներգործության հետևանք է:

Որպես հոգեբանական հիմնախնդիր՝ ատենախոսության սույն թեման ուսումնասիրվում է առաջին անգամ: Այն հնարավորություն կտա ճանաչելու մոր ագրեսիվ վարքը՝ որպես հասարակության արատավոր երևույթ, բացահայտելու նրա հոգեբանական պատճառականությունը, առաջարկելու երևույթի կանխարգելմանն ու հաղթահարմանը նպաստող համապատասխան միջոցառումներ:

Հետազոտության նպատակը մոր ագրեսիվ վարքի առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ հոգեբանական պատճառականության ուսումնասիրումն է:

Հետազոտության հիմքում ընկած գիտական վարկածի համաձայն՝ բռնությունը և մանկասպանությունը՝ որպես մոր ագրեսիվ վարքի դրսևորումներ, պայմանավորված են ընտանեկան անբարեհարմարությամբ, դեպրիվացված մանկությամբ, հոգեկան զարգացման ցածր մակարդակով, ներանձնային և միջանձնային կոնֆլիկտայնությամբ, այլափոխված արժեհամակարգով, քրեականացված, աուտոագրեսիվ վարքով, հոգեբանական-ախտաբանական համալիր պատճառականությամբ:

Երբեմն վերը նշված որակներն այդպիսի մայրերի մոտ ամբողջական դրսևորում են ունենում, և, կախված անձի հոգեբանական առանձնահատկություններից, գերիշխում է այս կամ այն գործոնը:

Գիտական վարկածը ստուգելու և աշխատանքի նպատակն իրականացնելու համար հետազոտության հիմքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

1. դիտարկել մոր ագրեսիվ վարքը և նրա նկատմամբ վերաբերմունքը հասարակության զարգացման տարբեր փուլերում՝ նկատի առնելով ժամանակի հասարակական գիտակցությունը և սոցիալ-տնտեսական պայմանները,

2. ներկայացնել մայրության հիմնախնդիրը, նրա ձևավորումը պայմանավորող նախադրյալները, ցույց տալ կնոջ մայրական ոչ համարժեք վարքի դրսևորմանը նպաստող սոցիալ-հոգեբանական պատճառները,

3. վերլուծել հիմնախնդրին վերաբերող տեսական և փորձարարական ուսումնասիրությունները,

4. բացահայտել և համակարգել այն գործոնների փոխկապակցվածությունը, որոնք հանգեցնում են հոգեբանական այնպիսի փոփոխությունների, որոնց արդյունքում մայրն իրականացնում է բռնություն կամ մանկասպանություն,

5. հետազոտել և փորձարարական ճանապարհով վեր հանել մոր ագրեսիվ վարքը պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառականությունը,

6. ստացված արդյունքների հիման վրա մշակել մոր ագրեսիվ վարքի հաղթահարմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ,

7. իրականացնել ստուգիչ գիտափորձ՝ ռեթեստավորում՝ երևույթի կանխարգելման հուսալիությունը ստուգելու և հաստատելու համար:

<u>Հետազոտության օբյեկտը</u> մանկասպանություն կամ երեխայի նկատմամբ ագրեսիվ այլ գործողություններ դրսևորած մոր հոգեկանի փոփոխություններն են, մեխանիզմներն ու վարքի դրդապատճառները:

<u>Հետազոտության առարկան</u> վերջին տասը տարիների ընթացքում մանկասպանություն կամ սեփական երեխայի նկատմամբ բռնարարքային գործողություններ իրականացրած մայրերն են, ինչպես նաև Աբովյանի քրեակատարողական հիմնարկում, ՀՀ դատարաններում, քրեակատարողական վարչությունում գտնվող քրեական գործերը, «Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամում և «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում առկա հատուկ հսկողության տակ գտնվող մայրերի անձնական գործերը:

<u>Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը:</u> Մեր կողմից առաջ քաշված հիմնահարցն իր մեջ ներառում է երկու հիմնական ոլորտ՝ մայրություն և ագրեսիվ վարք: Ելնելով այս տրամաբանությունից՝ հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել մայրական վարքի շուրջ ձևավորված տեսությունները, նշանավոր հոգեբանների՝ Դ.Վիննիկոտի, Դ.Փայնզի, Ս.Մեշերյակովայի հիմնարար հետազոտությունները, Գ.Ֆիլիպովայի մայրության օնտոգենետիկական և Վ.Բրուտմանի դևիանտ մայրության կենսահոգեսոցիալական հայեցակարգերը:

Մոր ագրեսիվ վարքի կազմավորման հոգեբանական պատճառականության ուսումնասիրման համար կարևորել ենք Ջ.Բոուլբիի, Ռ.Օվչարովայի, Ի.Վշիվկովայի աշխատությունները:

Ագրեսիվ վարքի առաջացման մեխանիզմները հասկանալու համար հիմնվել ենք Զ.Ֆրեյդի, է.Ֆրոմի, Ա.Բասի, Ս.Ենիկոլոպովի, Ջ.Դոլլարդի, Ն.Միլլերի, Լ.Բերկովիցի, Ա.Բանդուրայի տեսությունների վրա:

<u>Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն</u> ուղղված են իրականացնելու հետազոտության նպատակը և խնդիրները: Կիրառվել են զրույցի, դիտման, քրեական գործերի, անձնավորության ուսումնասիրման կենսագրական, ագրեսիվության ուսումնասիրման Ա.Բասի և Ա.Դարկիի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Հ.Այզենկի

«Անձնային թեստը», Յու.Ալեշինայի «Անձի ինքնաիրացման մակարդակի չափման թեստը», Ռ.Շեֆերի և Ռ.Բելլայի «Ընտանեկան կյանքը մոր աչքերով» (PARI) մեթոդիկան (ադապտացված՝ Տ.Նեշերետի կողմից), ինչպես նաև մաթեմատիկական վիճակագրական մեթոդը:

Հետազոտության ընթացքում իրականացվել են նաև սոցիոլոգիական հարցումներ, որոնք հնարավորություն են տվել բացահայտելու ագրեսիվ վարք դրսևորող մայրերի՝ մայրական վարքի, վերաբերմունքի, դաստիարակչական միջոցառումների վերաբերյալ դիրքորոշումները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Բացահայտված հոգեբանական օրինաչափությունները, փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտան ընկալել հիմնախնդրի հոգեբանական և սոցիալական կողմերը, հասկանալ դրա առաջացման պատճառները, ներկայացնել բռնություն և մանկասպանություն իրականացրած մայրերի վարքագծային դրսևորումների առանձնահատկությունները և պատճառահետևանքային կապերը, մշակել անհրաժեշտ կանխարգելիչ մեթոդական հանձնարարականներ, որոնցով կլրացվի ընտանեկան բռնություններին վերաբերող գիտական ուսումնասիրությունների շարքը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ստացված արդյունքները կարող են կիրառվել «Իրավաբանական հոգեբանության» մագիստրոսական ծրագրում՝ որպես առանձին գործնական դասընթաց:

Քրեակատարողական հիմնարկներում կարելի է կազմակերպել վերականգնողական աշխատանքներ, իրականացնել լուսավորչական գործընթացներ նոր ամուսնացող զույգերի, կրթական հաստատություններ հաճախող ծնողների, հսկողության տակ գտնվող մայրերի հետ՝ ընտանեկան և տարիքային հոգեբանության, ծնողավարության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու նպատակով:

Հետազոտության գիտական նորույթը: Առաջին անգամ գիտական հետազոտության առարկա են դարձել բռնություն, մանկասպանություն իրականացնող մայրերի հոգեկանում կատարվող համալիր փոփոխությունները, որոնք, զուգակցվելով սոցիալական անբարենպաստ պայմանների հետ, հանգեցնում են երեխայի նկատմամբ ագրեսիայի:

Արդյունքում կազմվել է երեխայի նկատմամբ բռնարարք իրականացնող մոր հոգեբանական մոդելը:

Հետազոտության փորձաքննությունը: Պարբերաբար տեղեկատվություն է հաղորդվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերում: Ստացված արդյունքները քննարկվել են «Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամում, «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում, Աբովյան քրեակատարողական հիմնարկում, Երևանի 86, 171, 200, 194 հանրակրթական դպրոցներում:

Ատենախոսության հիմնական գաղափարներն ու դրույթները հրապարակվել են յոթ հոդվածում, որոնցից 5-ը ներկայացվել են գիտաժողովներում, այդ թվում՝ միջազգային:

Հետազոտության հավաստիությունն ու հուսալիությունը ելնում է հոգեբանական հետազոտությունների համար առաջադրված գիտական պահանջներից: Արդյունքներն ապահովել են ընտրված մեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, ուսումնասիրվողների անհրաժեշտ թվաքանակը, ինչպես նաև՝ արդյունքների մշակման մաթեմատիկական հիմնավորումները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1) Մայրերի կողմից երեխային ուղղված ագրեսիվ վարքաձևերը դրսևորվել են դեռևս հասարակության զարգացման ամենավաղ փուլերում: Դրանց պատմական քննությունը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմելու մոր ագրեսիվ վարքի ծագումնաբանության մասին:

2) Մոր ագրեսիվ վարքի առաջացումն ունի իր կայացման աստիճանական ընթացքը, որտեղ հատկապես կարևորվում են վերջինիս հոգեկանում կատարվող բացասական փոփոխությունները, ներանձնային և միջանձնային կոնֆլիկտները, արժեքային այլափոխումները. սրանք մոր ագրեսիվ վարքի մեխանիզմներում գերիշխող պատճառականություն ունեն:

3) Ագրեսիվ վարք դրսևորող մայրերի՝ սեփական անձի, երեխայի, շրջապատի հետ փոխհարաբերությունները հատկանշվում են յուրատիպ հոգեբանական առանձնահատկություններով, որոնք կապված են իր՝ որպես կին և մայր կարգավիճակի, երեխայի անձի և նրան դաստիարակելու վերաբերյալ ունեցած ոչ լիարժեք պատկերացումների հետ:

4) Մանկասպանության և բռնության յուրաքանչյուր դեպք իրականացվում է մայրերի անձնային և վարքագծային մակարդակում կատարվող փոփոխությունների արդյունքում և պայմանավորված է համալիր դրդապատճառներով:

5) Մոր ագրեսիվ վարքի հաղթահարմանն ուղղված աշխատանքները՝ ուսուցողական սեմինարները, անձնային աճի թրենինգները, միտված են լուծելու հետևյալ նպատակները՝ ուժեղացնել մայրերի անձնային ռեսուրսները, ձևավորել սեփական անձի և երեխայի միջև գոյություն ունեցող արդյունավետ փոխհարաբերություններ, ինչպես նաև մատուցել ագրեսիվ մտայնության ռեգրեսիային նպաստող երեխաների տարիքային առանձնահատկությունների և ծնողավարման հմտությունների վերաբերյալ գիտելիքներ:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է համակարգչային 163 էջ կազմող շարադրանքից՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ և հավելվածներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Մոր ագրեսիվ վարքը՝ որպես հոգեբանական հետազոտության հիմնախնդիր»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից՝ *«Մոր ագրեսիվ վարքի դրսևորումները (պատմական ակնարկ)», «Մայրությունը՝ որպես հոգեբանական հիմնախնդիր», «Ագրեսիայի և ագրեսիվ վարքի ուսումնասիրման տեսական հիմքերը»:*

Առաջին ենթագլխում ներկայացվում է մոր ագրեսիվ վարքի տարժամանակյա ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս

դիտարկելու մայրության, մայրական վարքի և դերի, հասարակության զարգացվածության և առկա սոցիալ-տնտեսական հարաբերությունների միջև փոխկապակցվածությունը:

Աշխատանքի այս բաժնում մոր ագրեսիվ վարքը, երեխայի նկատմամբ նրա վերաբերմունքը ենթարկել ենք պատմական քննության:

«Մայրությունը՝ որպես հոգեբանական հիմնախնդիր» ենթագլխում ներկայացնում ենք մայրության վերաբերյալ տեսական մոտեցումները և հայեցակետերը, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու մայրության հոգեբանական էության, մայրական վարքի, երեխայի նկատմամբ նրա սուբյեկտիվ վերաբերմունքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունների մասին:

Որպես մայր՝ կինը կայանում է՝ անցնելով հսկայական ճանապարհ՝ սկսած իր օնտոգենետիկական զարգացման ամենավաղ փուլերից: Այս առումով կարևորում ենք **Դ.Վիննիկոտի**, **Ս.Մեշերյակովայի**, **Գ.Ֆիլիպովայի** տեսական մոտեցումները և նրանց ներդրումը մայրությանը վերաբերող մի շարք հարցերի պարզաբանման գործում:

Վերջիններս մայրական վարքի ձևավորման հիմքն էին համարում սեփական մոր հետ ունեցած հարաբերությունները, որոնց ինչպիսին լինելը և պայմանավորում էր մայրության ու երեխայի հանդեպ նրա դիրքորոշումը:

Բռնության և մանկասպանության հակված մայրերի վարքագծային առանձնահատկությունների բացահայտման համար հիմնվել ենք **Վ.Բրուտ-մանի** դևիանտ մայրության կենսահոգեսոցիալական հայեցակարգի, իսկ մոր ագրեսիվ վարքի կազմավորման ներքին պատճառների, երեխա-ծնող, մասնավորապես՝ երեխա-մայր հարաբերությունների ուսումնասիրության համար՝ **Դ.Փայնզի, Ջ.Բոուլբիի, Լ.Օվչարովայի** և այլոց հիմնադրույթների վրա:

Այս գլխի ամփոփիչ՝ ***«Ագրեսիայի և ագրեսիվ վարքի ուսումնասիրման տեսական հիմքերը»*** բաժնում վերլուծության ենք ենթարկել ագրեսիվության և ագրեսիվ վարքի առաջացման մեխանիզմներն և պատճառները մեկնաբանող տարաբնույթ մոտեցումներն ու տեսական դրույթները:

Ատենախոսության **«Մոր ագրեսիվ վարքի պատճառականության հիմնախնդիրը»** խորագրով երկրորդ գլուխը կազմված է «*Մոր ագրեսիվ վարքի բնութագրական հատկանիշները*», «*Բռնության և մանկասպանության մեկնաբանությունը հոգեբանության մեջ*» ենթագլուխներից:

Մայրության բովանդակությունը կազմում են կնոջ՝ իր կյանքին, անձին, երեխային ուղղված դիրքորոշումները: Եթե նա ագրեսիվ, բռնարարքային վարք է դրսևորում, ապա դա պայմանավորված է նրա՝ մայրությանը պատրաստ չլինելու, հղիության անցանկալիության, երեխայի անձը չընդունելու, նրանից ազատվելու ձգտման, ծնողավարման հմտությունների բացակայության և այլ հանգամանքներով:

Մայրության որակը և կնոջ հոգեբանական, սոցիալական, բարոյական հասունությունը փոխկապակցված են: Հաճախ նրան տեսանելի չեն իր իսկ խնդիրները, որոնք վերագրվում են երեխային՝ խաթարելով նրա հետ ունեցած հարաբերությունները:

Հաջորդ ենթագլուխը նվիրված է մոր ագրեսիվ վարքի դրսևորումներին:

Մոր ագրեսիվ վարքը կնոջ՝ մայրական դերից շեղումն է, միևնույն ժամանակ մայրական վարքի ասոցիալ կամ քրեածին ձևերից մեկը:

Բռնությունն ագրեսիվ վարքի, դրա շարունակական ընթացքի արտահայտությունն է, որի «հանգուցալուծումը» կարող է լինել երեխայի սպանությունը:

Մանկասպանության հիմքում ընկած դրդապատճառները տարբեր են. ընդհանրությունը մոր մեջ այդ քայլին գնալու հոգեբանական ներքին նախատրամադրվածության առկայությունն է:

Ատենախոսության երրորդ՝ **«Մոր ագրեսիվ վարքի փորձարարական հետազոտություն»** գլխում հինգ ենթաբաժնով ներկայացվում է փորձարարական ողջ աշխատանքը: Այն ուղղված է բացահայտելու և՛ մանկասպանություն, և՛ բռնություն իրականացնող մոր հոգեբանական նկարագիրը և ստեղծելու մանկասպան մոր մոդելը:

Առաջին՝ ***«Հետազոտության կազմակերպումը և մեթոդիկան»*** ենթաբաժնում առաջարկում ենք փորձարարական հետազոտության նախապատրաստական փուլը (2005-2006 թթ.)՝ մեթոդները, փորձարարական խմբերի ընտրությունը և ընտրակազմի ձևավորումը:

Բուն փորձարարական փուլում (2006-2011 թթ.) իրականացրել ենք ՀՀ ոստիկանությունում առկա քրեական գործերի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի տվյալների, ՀՀ դատարանների արխիվներում, քրեակատարողական վարչությունում պահպանված քրեական գործերի ուսումնասիրում, Աբովյան ՔԿՀ-ում գտնվող ագրեսիվ վարք դրսևորած դատապարտյալ, «Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոնում հաշվառված, «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում գրանցված երեխաների, ինչպես նաև ՀՀ հանրակրթական չորս՝ Երևանի թիվ 200, 194, 171, 86 դպրոցների աշակերտների՝ ագրեսիվ վարք դրսևորած մայրերի հետազոտում:

Փորձարարական աշխատանքներում ընդհանուր հաշվով ներառվել է 453 մայր, որոնցից բուն ուսումնասիրությանը մասնակցել է 225-ը:

Աբովյանի կանանց քրեակատարողական հիմնարկում աշխատել ենք 150 կին դատապարտյալի հետ: Ծանոթանալով նրանց քրեական և անձնական գործերին, հավաքելով անամնեստիկ տվյալներ և հիմնվելով դիտման, զրույցի, հարցաթերթիկի մեթոդների արդյունքների վրա՝ նրանցից առանձնացրել ենք 67 մանկասպան, իրենց երեխաների նկատմամբ առանձնակի դաժանություն դրսևորած, բռնության հակված մայրերի: Միևնույն ժամանակ վերլուծության ենք ենթարկել 53 քրեական գործ՝ սկսած 1992 թվականից:

«Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամում ծանոթացել ենք 120 անձնական գործի և ուսումնասիրել 43 մոր, որոնցից, իրենց ցանկության բացակայությամբ պայմանավորված, բուն հետազոտությանը մասնակցել են միայն 36-ը:

«Երևանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում հոգեբանական վերլուծության ենք ենթարկել այստեղ հաշվառված 80 անձնական գործ և աշխատել 60 մոր հետ, որոն-

ցից միայն 37-ն են մասնակցել հետազոտությանը՝ նույն գործոններով պայմանավորված:

Հետազոտական աշխատանքը շարունակվել է Երևանի հանրակրթական 4 դպրոցներում (թիվ 200, 194, 171, 86) կազմակերպված ուսումնասիրություններով:

Սկզբնական փուլում հետազոտությանը մասնակցել են ընդհանուր թվով 200 ծնող՝ յուրաքանչյուր դպրոցում 50՝ 25-25 մասնակցով, որոնց հետ անցկացրել ենք երկօրյա սեմինար-քննարկումներ՝ «Ի՞նչ խնդիրների են բախվում մայրերը», «Ինչպե՞ս եք պատկերացնում երեխայի դաստիարակությունն այսօր» հարցերի շուրջ:

Հիմնվելով ստացված արդյունքների, դիտման, զրույցի, հարցաթերթիկի մեթոդներով դուրս բերված տվյալների, ինչպես նաև այն դիտարկումների վրա, որոնք ներկայացրին մանկավարժները՝ առանձնացրինք 85 մայրերի, ովքեր չեն պատկերացնում, թե ինչպե՛ս պետք է ընթանա երեխայի դաստիարակությունը, չունեն համապատասխան հմտություններ և երեխաների հետ շփման մեջ միշտ կիրառում են ագրեսիվ վերաբերմունք, բռնություն:

«Հետազոտության արդյունքներն ու դրանց հոգեբանական վերլուծությունը» ենթաբաժնում ներկայացվում են կատարված աշխատանքները (2009-2012 թթ.):

Ուսումնասիրված քրեական և անձնական գործերի վերլուծությունը, ինչպես նաև փորձարարական հետազոտությունները ցույց տվեցին, որ ագրեսիվ վարք դրսևորող մայրերի ճնշող մեծամասնությունն (98%) անբարենպաստ ընտանիքներից է՝ ամուսնալուծված, միակողմանի կամ երկկողմ ծնողազուրկ, կոնֆլիկտային հարաբերություններով լեցուն, ասոցիալ, բազմազավակ, բազմանդամ, սոցիալ-տնտեսական դժվարություններով ապրող: Այստեղ անբարենպաստությունը կարող է պայմանավորված լինել ինչպես ծնողի անձնային առանձնահատկություններով և կյանքի որակով՝ հոգեախտաբանական խնդիրներ, ծնողավարման հմտությունների բացակայություն, անհամատեղելի կամ չկայացած ամուսնություն, այնպես էլ երեխայի անձով՝ անցանկալիությամբ, չպլանավորվածությամբ, առողջական խնդիրներով:

Նմանատիպ ընտանիքներում գերիշխում են լարվածությունն ու անհանդուրժողականությունը, կոնֆլիկտայնությունն ու թշնամանքը, բացակայում են հոգատարությունը, հուզական կապվածությունն ու սերը:

Կնոջ սոցիալական փորձը, հարաբերությունները, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքն էականորեն ազդում են մայրական վարքի դրդապատճառային հիմքի ձևավորման վրա:

Մոր ագրեսիվ վարքը վերլուծելիս կարևորում ենք նաև կնոջ ներկայիս ընտանեկան կարգավիճակի (ամուսնալուծություն, արտաամուսնական հարաբերություններ և այլն) դիտարկումը, ինչը հնարավորություն է տալիս այլ տեսանկյունից մոտենալու երևույթի պատճառականության բացահայտմանը:

Ինչպես փաստում են Ռ.Շեֆերի և Ռ.Բելլայի մեթոդիկայից ստացված տվյալները՝ հետազոտվող մայրերի 57.6%-ն ընտանիքում իրեն ընկալում է իբրև զոհ, իսկ 63.9%-ը զգում է ամուսնու աջակցության կարիքը: Փաստացիորեն, նրանք կրում են ընտանեկան խնդիրները լուծելու հիմնական պատասխանատվությունը, այդ թվում և երեխային դաստիարակելու, ինչն

ընտանեկան անբարենպաստության ցուցանիշներից մեկն է: Դրանցից է նաև մայր-երեխա հարաբերություններում մոր գերհեղինակային լինելը՝ 67.1%: Բռնություն, ճնշում գործադրելով՝ նրանք ցանկանում են «կառավարել» երեխային, ինչը նրանց ծնողավարման ոչ ճիշտ մոտեցման և դաստիարակչական ռազմավարության բացակայության վկայությունն է: Երեխայի հետ հարաբերություններում նրանց լարվածությունն ու անհանդուրժողականությունը հաճախ դրսևորվում են չափից դուրս խստությամբ (65.2%), բռնկվելու հակվածությամբ (53.8%), որի արդյունքում ճնշվում է երեխայի կամքը (60.1%) և հիմնական պահանջմունքների բավարարման հնարավորությունը:

Մայրերի նման վարքը հիմնականում պայմանավորված է նրանց դեպրիվացված մանկությամբ: Մոր վաղ հարաբերությունների բացասական փորձառությունն անհետևանք չի մնում: Այն առաջ է բերում մի շարք հոգեսոցիալական խնդիրներ, որոնց արտահայտումը մենք դիտարկում ենք ծնող-երեխա հարաբերություններում, որտեղ վերջիններս դժվարանում են ճիշտ կողմնորոշվել և հստակ գիտակցել իրենց պարտականությունները: Սա հանգեցնում է հարաբերությունները հավասարակշռության մեջ պահելու անկարողության՝ 69.6%՝ ըստ Ռ.Շեֆերի և Ռ.Բելլայի մեթոդիկայի տվյալների. այստեղ բարձր տոկոս է կազմում նաև երեխայի կյանքում չափից դուրս ներգրավվածությունը՝ 75.9%: Վերը նշված դրսևորումներն ըստ էության սկիզբ են առնում մոր՝ դեռևս երեխայի ծնունդից առաջ ստեղծված խորքային խնդիրներից, որոնք առավելապես սրվում են վերջինիս հետ հարաբերություններում:

Ագրեսիվ վարք դրսևորող մայրերին (51%) բնորոշ է նաև կասկածամտությունը, որն այլ մարդկանց նկատմամբ անվստահության ու զգույշ վերաբերմունք դրսևորելու հակումն է և բխում է այն համոզմունքից, որ շրջապատի մարդիկ մտադիր են վնասել իրենց (համաձայն Ա.Բասսի և Ա.Դարկիի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի»): Բարձր է նաև հետազոտվողների նյարդայնության մակարդակը՝ 52.5%, որը հարմարվողականության ցածր աստիճանի, սովորական և սթրեսային իրավիճակներում նպատակաուղղված վարքի բացակայության, տրամադրության արագ փոփոխման, դեպրեսիվ ռեակցիաների և այլնի (համաձայն Հ.Այզենկի անձնային հարցարանի) վկայությունն է:

Հիմնվելով Յու.Ալեշինայի թեստից ստացված արդյունքների վրա՝ եզրակացնում ենք, որ հետազոտվող մայրերի ընդհանուր զարգացվածությունն ու անձնային հասունությունը ցածր մակարդակ ունեն. թույլ է արտահայտված նրանց իմացական պահանջմունքը՝ 87.3%՝ շրջապատող աշխարհի մասին որևէ գիտելիք ստանալու ձգտման բացակայութամբ, 74.1%-ի մոտ ցածր է շփվողականությունը, որը դժվարացնում է հարաբերությունները մարդկանց հետ:

Ագրեսիվ վարք դրսևորող մայրերի ինքնահիրացման ցածր մակարդակի առկայությունը նկատելի է նաև սեփական անձի նկատմամբ վերաբերմունքում: Նրանց 60.1%-ն ինքնաընդունման խնդիր ունի, թույլ է արտահայտված ինքնահարգանքը՝ 43.7%, իսկ 57.6%-ի մոտ առանձնացնում ենք աջակցության սանդղակի ցածր մակարդակը, որն անձի կախվածության և հարմարվողականության բարձր աստիճանի վկայությունն է:

Հետազոտվողների վերոնշյալ առանձնահատկությունները դիտարկելի էին նաև փորձարարական աշխատանքների ընթացքում: Նրանց 90%-ն ուներ ինքնարտահայտման, սեփական խնդիրները բարձրաձայնելու դժվարություն: Այստեղ մեծ տոկոս են կազմում միջնակարգ կրթությամբ և որևէ զբաղվածություն չունեցող կանայք, ինչը որոշակիորեն հասկանալի է դարձնում նրանց գրագիտության ցածր մակարդակն ու երեխաներին դաստիարակելիս մի շարք խնդիրների (զարգացման, կրթական, անձնային և այլն) լուծման անկարողությունը, որոնք ներանձնային և միջանձնային կոնֆլիկտների առաջացման խթաններից են:

Կոնֆլիկտայնությունն ագրեսիվ վարք դրսևորող մայրերի բնութագրական առանձնահատկություններից է: Ընտանիքում դրանք հաճախադեպ են, որի մասին խոսել ենք Ռ.Շեֆերի և Ռ.Բելլայի մեթոդիկայի արդյունքները (70.9%) ներկայացնելիս: Վերջիններիս հավաստիությունը հաստատվում է Հ.Այզենկի թեստի արդյունքներով: Այստեղ նյարդայնության առավելագույն արտահայտվածությունը կազմել է 52.5%, ինչը խոսում է դյուրագրգիռության, գրգռվածության, զգայունության, տագնապայնության բարձր աստիճանի մասին: Սակայն, չսահմանափակվելով այդ տվյալներով, ինչպես նաև ընդունելով կոնֆլիկտների բազմաբնույթ պատճառականությունը՝ պայմանավորված արտաքին և ներքին գործոններով և կարևորելով դրանց փոխկապակցվածությունը, վերլուծությունն ուղղում ենք՝ մատնանշելու ներանձնային բնույթի կոնֆլիկտները՝ դրանք դիտարկելով որպես միջանձնային կոնֆլիկտների հիմնական դրդիչ:

Ագրեսիվ վարք դրսևորող մայրերը մի շարք բացասական ներգործությունների կրողն են, որոնք բերում են ներքին լարվածության, անբավարարվածության, ագրեսիվության, չարության և այլն:

Մայրերի ներքին խռովքի ու միջանձնային հարաբերություններում արտահայտված կոնֆլիկտայնության մասին փաստում են Ա.Բասսի և Ա.Դարկիի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի» կիրառումից ստացված արդյունքները, որտեղ բարձր արտահայտվածություն ունի անուղղակի ագրեսիան՝ 55%՝ անուղղակի ճանապարհով այլ անձանց հասցեին ուղղված բամբասանքներ, կատակներ, զայրույթ, բռնկում և այլն:

Յու.Ալեշինայի թեստի միջոցով բացահայտել ենք, որ հետազոտվող մայրերի 68.4%-ի մոտ արժեքային կողմնորոշումները թույլ արտահայտվածություն ունեն, որը խոսում է նաև նրանց ինքնահիրացված չլինելու և սեփական արժեքները կիսելու պատրաստակամության բացակայության մասին:

Այլափոխված արժեհամակարգ ունեցող մայրերն իրենց անհամարժեք վարքով և վերաբերմունքի բացասական ուղղվածությամբ խեղաթյուրում են ոչ միայն երեխայի մանկությունը, նրա զարգացման ընթացքը, այլև իրենք իրենց: Այս առումով ենթադրելի է, որ նրանց վարքի քրեականացումը ելնում է վերոնշյալ պատճառականությունից: Երեխայի հետ հարաբերություններում ցուցաբերվող շարունակական ագրեսիան և բռնությունը, ուղեկցվելով անպատժելիությամբ, աստիճանաբար քայքայում են մոր բարոյական կերպարն ու որակները՝ առավել արտահայտված դարձնելով նրա՝ ֆիզիկական ագրեսիա կիրառելու հակվածությունը (52%), ինչպես նաև

նեգատիվիզմը՝ 51%, որն արտահայտվում է ընդունված պահանջներին հակադրվելու միտումով (Ա.Բասս, Ա.Դարկի):

Հետաքրքրական են ինքնաագրեսիայի կամ մեղքի զգացման սանդղակի արդյունքները (28% նվազագույն արտահայտվածությամբ), որոնք գալիս են հաստատելու այն ենթադրությունը, որ այլափոխված արժեհամակարգը և քրեականացված վարքը հաճախ հնարավորություն չեն տալիս գիտակցելու իրենց վարքի վնասակար բնույթն ու կործանարար հետևանքները:

Մոր ագրեսիվ վարքի պատճառականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնահարցը պայմանավորում է ներգործությունների մի ամբողջական համակարգ, որտեղ առաջնային են և՛ օբյեկտիվ իրականությունը, և՛ վերջինիս սուբյեկտիվ ընկալումը:

Ընդհանրացնելով մեր ուսումնասիրությունների արդյունքները՝ տարանջատել ենք մոր ագրեսիվ վարքի հետևյալ ձևերը՝ **մանկասպանություն, ֆիզիկական բռնություն, սեփական երեխայի շահագործում, հոգեբանական բռնություն և խոսքային ագրեսիա:**

Ստորև ներկայացնենք մանկասպանություն իրականացրած մայրերի հոգեբանական վերլուծությունը (տե՛ս գրաֆիկ 1):



Գրաֆիկ 1. Մանկասպանություն իրականացրած մայրերի հոգեբանական վերլուծություն

Մեր հետազոտությունն ապացուցում է, որ մանկասպանություն իրականացնող մայրերը երեխային ընկալում են որպես խոչընդոտ, արգելք՝ իրենց տարբեր պահանջմունքների բավարարման համար, որը, թերևս, շրջապատի կողմից կարող է և տեսանելի չլինել:

Մանկասպանություն իրականացնելու որոշումը, համաձայն մեր հետազոտությունների, կարող է կրել կանխամտածված, ինչպես նաև իմպուլսիվ բնույթ, որտեղ դրդապատճառները տարբեր են:

Կանխամտածված մանկասպանությունների դեպքում ագրեսիան ստանում է տարբեր դրսևորումներ՝ ֆիզիկական, հոգեբանական, երազային, երևակայական, խոսքային, անուղղակի ագրեսիայի տեսքով, որոնք, ունենալով տևական բնույթ, ավարտվում են մանկասպանությամբ:

Մանկասպանության դեպքերը երեխայի զարգացման առավել ուշ փուլերում իրագործվում են նույն օրինաչափությամբ: Մայր-երեխա հարաբերություններում գերիշխում են լարվածությունն ու կոնֆլիկտայնությունը, մշտական վիրավորանքներն ու հոգեբանական ճնշումները, իսկ երեխան ընկալվում է իբրև պորտաբույծ, հոգս, «բեռ» և այլն: Այստեղ դրսևորվող շարունակական ագրեսիան ամփոփվում է մանկասպանությամբ. այն կարող է հանդես գալ որպես նյարդային վիճակում իրագործվող քայլ, այսինքն՝ մայրը չունենա նման մտադրություն, սակայն, չկարողանալով վերահսկել երեխային ուղղված իր վերաբերմունքը, կատարի այն (ունենք նյարդայնության բարձր արտահայտվածություն՝ 57.14%):

Ինքնաագրեսիայի աստիճանը բավական ցածր է՝ 17.17%: Այս հանգամանքը բացատրում ենք՝ առաջնորդվելով հետևյալ տրամաբանությամբ. մանկասպան մայրերն իրենց ընկալում են իբրև զոհ, որտեղ մանկասպանությունն ինքնաագրեսիան հետերոագրեսիայի վերածելու մեխանիզմի ձև է կամ տվյալ համատեքստում դիտվում է որպես աուտոագրեսիայի նույնացման ձև:

Անդրադառնալով ագրեսիվ վարքի մյուս դրսևորումներին՝ նշենք, որ նրանց միջև կա ընդհանուր օրինաչափություն: Այսպես. ֆիզիկական ագրեսիա իրականացնող մայրերի մոտ ագրեսիան ստացել է բարձր արտահայտվածություն՝ 59.46%, ինչը չի նվազում սեփական երեխային շահագործող (40%), հոգեբանական բռնություն (55.81%) և խոսքային ագրեսիա (50%) կիրառող մայրերի շրջանում:

Ցուցանիշներն այս կերպ ներկայացնելով՝ նպատակ ունենք ցույց տալու, որ մայրերի ագրեսիվ վարքը, ըստ իր դրսևորման ձևի, ստանում է ագրեսիայի արտահայտման տարբեր աստիճաններ: Պատահական չէ, որ մանկասպան մայրերի շրջանում այն գերազանցում է՝ 73.68%-ը:

Ինքնաագրեսիայի մակարդակը բարձր է ֆիզիկական բռնության հակված մայրերի միայն 5.41%-ի մոտ: Սեփական երեխային շահագործող և խոսքային ագրեսիա իրականացնողների մոտ այն բացակայում է, իսկ հոգեբանական բռնություն կիրառողներից ընդամենը 4.65%-ին է բնորոշ: Սա խոսում է այն մասին, որ ագրեսիվ վարք դրսևորող մայրերի մեծ մասը չի փնտրում, չի վերլուծում իր երեխայի հետ հարաբերություններում առաջացած խնդիրների պատճառները. առավելապես կենտրոնանում է կենցաղային և

ուսումնական դժվարությունների վրա: Նրանցում բացակայում է սեփական անձը վերլուծելու ցանկությունը, որը պայմանավորված է նրանց անձնային հասունության ցածր աստիճանով, սոցիալական հմտությունների ձևավորված չլինելով և այլն:

Նյարդայնության և վիրավորանքի ցուցանիշներում ներկայացված արդյունքները նույնպես երևույթի բարձր արտահայտվածության նվազման կարգով են ներկայացված: Այսպես, նյարդայնությունը ֆիզիկական ագրեսիա իրականացնող մայրերի մոտ 48.95% է, 31.67%, 25.58%, 28.33% համապատասխանաբար սեփական երեխային շահագործող, հոգեբանական բռնություն և խոսքային ագրեսիա կիրառող մայրերի շրջանում: Վիրավորանքը վերջինիս դեպքում 40.67% է, հոգեբանական բռնության դեպքում՝ 39.88%, սեփական երեխային շահագործողների մոտ՝ 53.33%, իսկ ֆիզիկական բռնություն իրականացնողների մոտ՝ 45.14%:

Ելնելով փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծությունից՝ կազմել ենք ***ագրեսիվ վարք դրսևորող մոր հոգեբանական մոդելը***:

Ագրեսիվ վարք դրսևորող մայրերը հիմնականում անբարենպաստ ընտանիքներից են, որտեղ նրանց նկատմամբ վերաբերմունքն ու հարաբերությունները կրել են բացասական բնույթ, լի են եղել ատելությամբ, անհանդուրժողականությամբ, ագրեսիվությամբ և նպաստել, որ նրանք յուրացնեն ծնողական վարքի այս մոդելը: Կենսափորձը և շրջապատող իրականության դժվարություններին դիմակայելու անկարողությունը նրանցում ձևավորել են թե՛ իրենց, թե՛ աշխարհին ուղղված ներքին լարվածություն ու թշնամանք, ինչը և պայմանավորել է նրանց մայրական կոնֆլիկտային էությունն ու հասարակայնորեն ընդունելի արժեքների մերժումը:

Նման մայրերին բնորոշ է նաև ասոցիալ, քրեածին վարքը, որն արտահայտվում է արարքներում և նախասիրություններում՝ անբարո ապրելակերպ, կախվածություն ալկոհոլից կամ թմրանյութերից, հակահասարարական ուղղվածություն ունեցող խմբերին անդամակցություն և ոչ միայն, ինչպես նաև դրական ուղղվածությամբ որևէ զբաղվածության բացակայությունը, կրթվածության շատ ցածր աստիճանը և այլն: Այսինքն՝ մինչ բուն վարքագծային ակտն իրագործելը, նրանք արդեն իսկ բարոյազրկված, այլափոխված արժեհամակարգով, սահմանափակ հետաքրքրություններով կանայք են:

Հետազոտության՝ ***«Մոր ագրեսիվ վարքի ձևավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառականության հոգեբանական բնութագիրը»*** ենթագլխում ներկայացվում է մոր ագրեսիվ վարքը պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների վերլուծությունը, որտեղ ամբողջականության մեջ ներկայացվում են հիմնախնդրի առաջացմանը նպաստող գործոնները:

Ելնելով հետազոտության արդյունքներից՝ ***«Մոր ագրեսիվ վարքի կանխարգելման հոգեբանական ուղիները»*** ենթագլխում իրականացրել ենք երևույթի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ՝ տալով դրա կասեցմանն ու հաղթահարմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ:

Հիմնահարցի տարածվածությունը, այն զարգացնող գործոնների բացահայտումն ու ուսումնասիրումը, ինչպես նաև դրանց համակարգումը հնարավորություն տվեցին մշակելու և իրականացնելու մոր ագրեսիվ վարքի հաղթահարմանն ուղղված գործողությունների ծրագիր:

Ատենախոսության վերջին՝ ***«Մոր ագրեսիվ վարքը պայմանավորող գործոնների ռեթեստավորման արդյունքները»*** ենթագլխում ամփոփում ենք ռեթեստավորման գործընթացը և վերլուծելով կատարվածը՝ տեսնում, որ հետազոտվող մայրերի մոտ դրական փոփոխություններն ակնհայտ են, ինչը հնարավորություն է ընձեռում փաստելու, որ հիմնախնդրի նկատմամբ մասնագիտական մոտեցման պարագայում հնարավոր է աջակցել մայրերին՝ դրանով իսկ կանխելով հասարակության համար այսքան արատավոր երևույթը:

Մոր ագրեսիվ վարքի հոգեբանական պատճառների բացահայտման և կանխարգելման ուղիների շուրջ իրականացված հետազոտությունների արդյունքում հանգում ենք հետևյալ **եզրակացությունների.**

1. Մոր կողմից երեխայի հանդեպ իրականացվող բռնության տարատեսակ դրսևորումները՝ մանկասպանություն, ֆիզիկական ճնշում, լքում, անտարբերություն, սովի մատնում և այլն, գոյություն են ունեցել պատմական տարբեր ժամանակաշրջաններում. երբեմն դրանք դատապարտվել են, երբեմն՝ արդարացվել, սակայն մշտապես դիտարկվել են որպես մոր կողմից երեխային ուղղված ագրեսիվ վարքի ակնհայտ դրսևորումներ:
2. Մոր ագրեսիվ վարքն ունի համալիր պատճառականություն, որտեղ գերիշխում է հոգեբանական գործոնների ամբողջական համակարգը. կախված կոնկրետ իրադրությունից՝ դրանցից յուրաքանչյուրը կարող է ունենալ ներգործության տարբեր աստիճաններ:
3. Մանկասպանության հակված և շարունակական բռնություն իրականացնող մայրերն իրենց ընտանեկան բացասական ներգործությունների կրողն են: Նրանք շարունակաբար ենթարկվում են տարաբնույթ զրկանքների, բռնության, որոնց արդյունքում աստիճանաբար խաթարվում են նրանց բարոյական արժեքներն ու պատկերացումները, ձևափոխվում են սոցիալական սպասելիքներն ու դերերի բովանդակային ընկալումները՝ արդյունքում աղճատելով իրենց հետագա սոցիալականացման գործընթացները:
4. Ընտանեկան անբարենպաստ մթնոլորտը, միջանձնային հարաբերությունների մշտական լարվածությունն ու կոնֆլիկտայնությունը, հարաբերություններում սիրո, զգացմունքայնության պակասն ու անպաշտպանվածությունն առաջացնում են բացասական դիրքորոշում, ինչն էլ զուգահեռաբար այլափոխում է անձի մոտ մոր մոդելի համարժեք ընկալումը:

Վերոնշյալը նրա հոգեկանում առաջ է բերում բացասական բնույթի մի շարք փոփոխություններ, ինչը, շրջապատի կողմից ուղեկցվելով անտարբերությամբ, հանգեցնում է նրա բարոյական կողմնորոշումների, արժեհամակարգի այլափոխմանը և հետագայում իր արտացոլումը գտնում

սեփական երեխայի նկատմամբ հարաբերություններում՝ ստանալով բռնարարքային տարաբնույթ դրսևորումներ:

5. Մայրերի բռնարարքային գործողություններն ունեն զարգանալու և առավել սաստկանալու հակվածություն: Ընդհանրական առումով՝ դրանք դրսևորվում են բռնության տարբեր ձևերով՝ **հոգեբանական**՝ նսեմացում, մերժում, արհամարհում, անտարբերություն, **սեփական երեխայի շահագործում**՝ դրդում մուրացկանության, սեռական շահագործում, **ֆիզիկական**՝ ծեծ, ապտակ, ճիպոտահարում, **խոսքային**՝ կոպրոլալիա, անեծքներ, սպառնալիքներ և այլն:

Բռնությունն ագրեսիայի արտահայտման միջոց է, մանկասպանությունը՝ ավարտված ագրեսիա: Դրանք փոխկապակցված են:

6. Բռնության հակված մայրերի վարքի դրսևորման հիմքում ընկած են **օբյեկտիվ պատճառականությունը**՝ ընտանեկան անբարեհարմարություն, սոցիալ-տնտեսական դժվարություններ, ծնողավարման դպրոցի բացակայություն, անպատժելիության, ամենաթողության դաշտ, հոգեկան ախտաբանական վիճակներ, և **սուբյեկտիվ պատճառականությունը**՝ մայրությանը պատրաստ չլինելը, երեխայի անձը չընդունելը, իմացական ցածր մակարդակը, հուզական անկայունությունը, անձնային որակների, բարոյական նորմերի, իրավական գիտակցության աղճատվածությունը, ներանձնային հակասությունները և այլն:

7. Ագրեսիվ վարք դրսևորող մայրերը հաճախ չեն գիտակցում իրենց վարքի իրական պատճառներն ու դրանց բացասական հետևանքները: Նրանք իրենց ընկալում են իբրև զոհ և ագրեսիան ուղղորդում դեպի երեխան՝ նպաստելով վերջինիս անձի խեղմանը:

8. Կանխարգելման գործընթացը պայմանավորված է մոր արգրեսիվ վարքի առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հաղթահարմամբ, երևույթի խորը և բազմակողմանի ուսումնասիրմամբ, կոնֆլիկտների լուծման ռազմավարության մշակմամբ, հոգեբանական ծառայությունների կողմից մշտադիտարկմամբ և հոգեկանի վերականգնմամբ, ռիսկի խմբում գտնվող մայրերի հետ պարբերական հոգեբանական միջոցառումների իրականացմամբ, սթրեսակայունության ձևավորմամբ, ծնվող երեխայի նկատմամբ մոր մոտ դրական դիրքորոշման առաջացմամբ, կյանքի իմաստավորմամբ և արժևորմամբ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի կողմից հրատարակած հետևյալ աշխատանքներում.

1. Մնացականյան Մ.Ն., Մայրության հիմնախնդիրը հոգեբանության մեջ, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (նոյեմբերի 7-9), Ե., «Մանկավարժ», 2007, էջ 143-145:

2. Մնացականյան Մ.Ն., Բռնությունը՝ որպես մոր դևիանտ վարքի դրսևորման ձև, Միջազգային գիտաժողով «Կրթության բարեփոխումների

հոգեբանական հիմնահարցերը» (ՀՊՄՀ, 15-16 նոյեմբերի), Ե., «Մանկավարժ», 2008, էջ176-181:

3. Մնացականյան Մ.Ն., Հոգեբանական պատրաստվածության բացակայությունը և մոր դևիանտ վարքի կապը, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Ե., «Զանգակ-97», 2009, էջ 126-134:

4. Մնացականյան Մ.Ն., Մոր շեղվող վարքի դրսևորումների պատմահոգեբանական վերլուծությունը, Գիտաժողովի նյութեր: Միջազգային գիտաժողով՝ նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին: Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն, ԼՂՀ ԿԳՆ, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Ե., «Լիմուշ», 2011, էջ 404-417:

5. Մնացականյան Մ.Ն., Մոր՝ երեխայի նկատմամբ բացասական վերաբերմունքի սոցիալ-հոգեբանական պատճառները, Գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2011, էջ 222-235:

6. Մնացականյան Մ.Ն., Մոր ագրեսիվ վարքի բացահայտման մի քանի հարցերի մասին, Կրթությունը և գիտությունը համաշխարհայնացման դարաշրջանում, ԼՂՀ ԿԳՆ, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Ե., «Լիմուշ», 2012, էջ 423-427:

7. Մնացականյան Մ.Ն., Մոր ագրեսիվ վարքի մեկնաբանման ժամանակակից մոտեցումները, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ, տեսություն և պրակտիկա: Գիտաժողով (2012 թ. դեկտեմբերի 14), 1-ին պրակ: Ե., «Մանկավարժ», 2013, էջ 208-211:

МНАЦАКАНЯН МАРИНА НОРИКОВНА
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ АГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ МАТЕРИ И ПУТИ ЕГО ПРЕДУПРЕЖДЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 «Общая психология, теория и история психологии, психология личности».

Защита диссертации состоится 30 сентября 2014 года в 12:00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010. Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Приобретение Арменией независимости вызвало ряд изменений в политической, социальной, экономической сферах страны, которые оказали воздействие на морально - психологическую ценностную систему общества, вызвав чувство отчуждения в межличностных отношениях, в том числе и в семье.

Семья-основа государства, где роль матери первостепена. Однако социальная напряженность и внутренняя тревога вследствие отсутствия чувства безопасности за настоящее и будущее часто способствуют возникновению и развитию агрессивного поведения, приводят к разнообразным проявлениям насилия, даже - к детоубийству.

Агрессивное поведение матери стало главным звеном воспитательной стратегии, и часто отсутствует сознание того, что агрессивное отношение к ребенку или насилие в действительности имеют деструктивное значение.

Как психологическая проблема она исследуется впервые. Полученные результаты позволят распознать агрессивное поведение матери как общественное порочное явление, выявить его психологическую причинность и предложить пути для их преодоления.

Целью исследования является изучение объективной и субъективной психологической причинности агрессивного поведения матери.

Гипотеза исследования. Насилие и детоубийство как проявление агрессивного поведения матери обусловлены семейным неблагополучием, депривированным детством, низким уровнем развития психики, внутриличностной и межличностной конфликтностью, деформированной системой ценностей, криминальным, аутоагрессивным поведением, комплексом психолого-патологической причинности.

Задачи исследования.

1. рассмотреть агрессивное поведение матери и отношение к нему на разных этапах развития общества, которое обусловлено общественным сознанием и социально-экономическими условиями;

2. представить материнство, предпосылки, обуславливающие его формирование, указать социально-психологические условия и причины, способствующие проявлению неадекватного материнского поведения;

3. проанализировать теоретические и экспериментальные исследования по проблеме и вывести те теоретико-методические основы, с которыми мы непосредственно сталкиваемся;

4. выявить и систематизировать взаимосвязанность факторов, способствующих появлению тех психологических изменений, под влиянием которых мать совершает насилие или детоубийство;

5. исследовать и экспериментальным путем выявить объективную и субъективную причинность, обуславливающую агрессивное поведение матери;

6. на основе полученных результатов разработать шаги, направленные на предупреждение и преодоление агрессивного поведения матери;

7. осуществить научный эксперимент - ретестирование - с целью проверки и подтверждения того, что вышеуказанное явление можно предотвратить.

Теоретическая значимость исследования. Выявленные психологические закономерности, анализ результатов экспериментальных работ позволят воспринять психологические и социальные стороны проблемы, понять причины их возникновения, представить особенности и причинно-следственные связи в поведении матерей, осуществивших насилие и детоубийство.

Практическая значимость исследования. Полученные результаты могут быть использованы в магистерской программе «Юридическая психология» в качестве отдельного практического курса. В уголовно-исполнительных учреждениях можно будет организовать профилактические работы, провести собеседование с родителями посещающих образовательные заведения, и с матерями, находящимися под надзором, для передачи знаний по семейной, возрастной психологии и о стратегии воспитания.

Научная новизна исследования. Впервые предметом исследования стали комплексные изменения в психике матерей, совершающих насилие и детоубийство, которые в сочетании с неблагоприятными социальными условиями приводят к агрессии по отношению к собственному ребенку.

В результате составлена психологическая модель матери, осуществляющей насилие над собственным ребенком.

Достоверность и надежность исследования вытекает из научных требований, предъявляемых к психологическим исследованиям. Результаты обеспечили выбранные методологические основы, использованные методы, необходимое количество испытуемых, а также математические обоснования обработки результатов.

Стуктура работы. Диссертационная работа объемом 165 компьютерных страниц состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. По теме диссертации опубликованы 7 статей.

MARINA NORIK MNATSAKANYAN

THE PSYCHOLOGICAL CAUSES OF A MOTHER'S AGGRESSIVE BEHAVIOUR AND THE WAYS OF PREVENTING IT

Thesis for degree of candidate of psychological specialty 19.00.01 - "General psychology, Theory and History of Psychology, Personality psychology".

The defense of the thesis will be held on September 30, 2014 at 12:00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC warding degrees under the Armenian State Pedagogical University after KH. Abovyan

(address: 0010, Yerevan, Tigran Mets 17)

SUMMARY

Actuality of the Research: The independence of Armenia brought about a number of changes in the political, social, economic spheres of the country, which influenced the moral and psychological value system of the society, creating a feeling of strangeness in interpersonal relations, as well as in the family.

The Family is the base of durability of the State, where the role of woman: Mother, is primary. However, the social strain and inner alarm connected with the absence of the sense of security towards the present and future frequently facilitate the emergence and development of a mother's aggressive behavior, lead to various expressions of violence, even killing a child.

The mother's aggressive behaviour has become an important tie in the upbringing strategy, and very often the consciousness that aggressive behavior or violence in fact are of destructive significance is absent.

As a psychological problem it has been examined for the first time. The gained results will provide an opportunity to identify the mother's aggressive behavior as a vicious phenomenon in society, to detect its psychological causality, to propose and outline the ways for coping with it which will contribute to the prevention of the phenomenon.

The aim of the Research is to examine the objective and subjective psychological causality of mother's aggressive behavior emergence.

Research Hypothesis: Violence and child killing as expressions of the mother's aggressive behavior are conditioned by the discomfort in family, deprivation in childhood, low level of mental development, interpersonal and intrapersonal conflict, changed value system, criminalized, auto-aggressive behavior, psychological and pathological complex causality.

For the fulfillment of the principal aim the following goals have been put forward.

1. To view the mother's aggressive behavior and the attitude towards her in different phases of the society development conditioned by the social consciousness and socio-economic conditions of the time.

2. To present motherhood and the prerequisites conditioning its formation, to demonstrate the socio-psychological reasons and conditions contributing to the manifestation of woman's inadequate behavior as a mother.

3. To analyse the theoretical and experimental examinations on the issues to detect the theoretical and methodological bases we directly deal with.

4. To discover and coordinate the interconnection of those factors which foster the emergence of such psychological changes under the influence of which the mother realizes violence or child-killing.

5. To examine and to detect with an experiment the objective and subjective causality conditioning the mother's aggressive behavior;

6. On the basis of the gained results to develop steps in the direction of preventing and coping with the mother's aggressive behavior.

7. To execute a control experiment: retesting, to check and verify the reliability of the phenomenon prevention.

The Theoretical Significance of the Research: The discovered psychological regularities, the analysis of the achieved results of the experimental work will give an opportunity to expand the psychological and social sides of the issue, to understand the reasons for its emergence, to present the peculiarities and causality of those mothers' behavior expressions who have executed violence or child-killing.

The Practical Significance of the Research: The results achieved may be applied in the "Legal Psychology" Master's programme as a separate practical course. In penitentiary institutions recovery work may be organized, enlightening /educational process may be implemented for the couples planning to get married and for the parents visiting educational institutions and for the mothers under control to convey them knowledge of family and age psychology and of what is being a parent.

The Scientific Innovation of the Research: This is the first time that complex changes taking place in the mothers' mind executing violence and child killing have become a subject of scientific examination, which, combined with unfavorable social conditions, lead to aggression towards one's own child.

As a result the psychological model of a mother executing violence to her own child has been established.

The veracity and reliability of the research proceeds from the scientific requirements put forward for the psychological research. The results have ensured the chosen methodological bases, applied methods, the necessary number of examinees, as well as the mathematical justification of results elaboration.

Structure of the research: The dissertation is made up of a 165- computer-page composition with an introduction, three chapters, conclusion, bibliography and appendices.

Seven articles were published dedicated to the investigation activities.